



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92  
Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017 թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ձեր 22.03.2017թ. թիվ 296 գրության՝

Հարգելի պարոն Ա.Սաքունց

Ի պատասխան ՀՀ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին 01.10.2015թ. N 44 արձանագրային որոշման վերաբերյալ Ձեր հարցմանը, հայտնում եմ, որ Լոռու մարզում առողջապահության ոլորտում թմրամոլության դեմ պայքարի ուղղությամբ առողջապահական ընկերությունների կողմից պարբերաբար կատարվում են կանխարգելիչ միջոցառումներ, թեման լուսաբանվում է զանգվածային լրատվամիջոցներով, և ընթացքում իրականացվում է հայտնաբերված դեպքերի բուժում: Մարզի առողջապահական ընկերությունների բժիշկները մասնակցում են թմրամոլության դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում անցկացվող համաժողովներին և քննարկումներին: Լոռու մարզային հոգեոնկալաբանական դիսպանսերում 2012թ. հուլիս ամսից իրականացվում է մետադոնային փոխարինող բուժման ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության և Գլոբալ ֆոնդի Մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի շրջանակներում: 2016թ. այս ծրագրում ընդգրկված են 18 թմրամոլներ: Ծրագիրն ունի բարձր արդյունավետություն:

Զբաղվածության պետական գործակալությունում ներկայումս գործում են հետևյալ պետական ծրագրերը՝ «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում», «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում», «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում», «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում»: Զբաղվածության պետական ծրագրերում կարող են ընդգրկվել այն անձինք, ովքեր անձամբ

ներկայացել են զբաղվածության տարածքային կենտրոններ, ցանկություն են հայտնել աշխատելու և հաշվառվելու՝ որպես աշխատանք փնտրողներ: Լոռու մարզի զբաղվածության կենտրոններ դիմող անձանց հետ տարված հարցազրույցների արդյունքում կատարված վերլուծություններից պարզվել է, որ կենտրոններ դիմող աշխատանք փնտրողների մեջ չկան թմրամոլներ, միաժամանակ հայտնում են, որ այլ պետական կամ հասարակական կազմակերպությունների կողմից չեն եղել նման անձանց ուղղորդումներ դեպի ՀՀ Լոռու մարզպետարան կամ մարզի զբաղվածության տարածքային կենտրոններ՝ նրանց աշխատանքի տեղավորելու համար:

ՀՀ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին 01.10.2015թ. N 44 արձանագրային որոշման N 2 հավելվածի 18-րդ կետի վերաբերյալ հայտնում են, որ 2016 թվականի ընթացքում Վանաձոր համայնքի տարածքում վերակառուցվել է թվով 6 խաղահրապարակ՝ բազմաբնակարան շենքերի բակերում և 1 սպորտային հրապարակ՝ Սայաթ-Նովայի անվան զբոսայգում:

Լեռնապատ համայնքի նորակառուց մանկապարտեզին հարակից տարածքում՝ 0,930 հա տարածքով, կառուցվել է համայնքային խաղահրապարակ, որը հագեցած է ժամանակակից մարզասարքերով՝ պտտածողեր, զուգափայտեր, սահելու, մագլցելու և ձգումների համակցված հարմարանքներ ու սարքեր, տնակներ, ճոճանակներ: Լեռնապատ համայնքի 16 փողոցում՝ մոտ 0,02 հա տարածքով, կառուցվել է բակային խաղահրապարակ, որը հագեցած է մարզասարքերով՝ պտտածողեր, զուգափայտեր և ձգումների համակցված հարմարանքներ:

Ազնվածոր համայնքում կառուցվել է նոր խաղահրապարակ: Տեղադրված են կառուսել, ճոճաթոռ, նստարան, սղարան, ճոճանակ, մարզասարք, պտտածող:

Ստեփանավան համայնքում քաղաքային մանկական այգում տեղադրվել և վերանորոգվել են պտտածողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մագլցման և ձգումների համակցված հարմարանքներ ու սարքեր:

Ագարակ համայնքում՝ նախկին մշակույթի տան հարևանությամբ, ստեղծվել է փոքրիկ մանկական խաղահրապարակ:

Ձորամուտ համայնքում ստեղծվել է խաղահրապարակ՝ հագեցած պարզ տիպի մարզասարքերով (պտտածող, ճոճանակներ, սահելու սարքեր):

Ծախսված ֆինանսական միջոցների և աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու համար պետք է դիմել տեղեկատվությունը տնօրինողներին՝ համապատասխան համայնքների ղեկավարներին:

17.1 և 17.2 կետերի վերաբերյալ տեղեկատվությունը կցվում է:

Առդիր՝ 2 էջ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ